

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄՈՒԹԵԱՆ ԼԵՃԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ

ԸՆԴ ՀՈՈՎՄԵԱԿԱՆ ԵՆԵՂԵՑՈՑ

Ի ԺԷ. ԴԱՐՈՒՄ

Գրուածքիս մակագրութենէն իսկ կարեն դատել ընթերցողք, թէ որքան կարևորութիւն ունի Լեհացի նշանաւոր հեղինակին, Ատուկտու Պալինսքիին այս գործը, և թէ քանի քանի պատմական, քաղաքական և ուրիշ մոր տեղեկութիւններ կը մատակարարէ մեր 'ի Լեհաստան գաղթող հայ գաղթականութեան և մորա հոգակալմուն համայնքներու պատմութեան մասին, որոնք, ըստ մեծի մասին դեռ անծանօթ էին մեզի. և որք մինչև ցայժմ լոյս տեսած ծանօթ հրատարակութիւններէն ամենէն աւելի փոքր ե ճիշդ կարելի են համարուիլ: Այդ գիտնալով մէկ կողմէն որ Լեհերէն լեզուն ազգայնաց մեծ մասին դեռ անմատչելի է, իսկ միւս կողմէն նկատելով, որ կամ ամօինք ոչք կը փափարին Լեհահայ գաղթականութեան կատարեալ պատմութիւն մի գրել, ըստ մորամոր յատմութեանց, քայք միջոցներ չունին, ուստի կը փութանք թարգմանելով հրատարակել 'ի **Բաշ-Բաշ**՝ այս յոյժ հետաքրքրական գործս 'ի քայք թողնալ հեղինակին ինչ ինչ գլուխներ, որոնք կամ մեծ կարևորութիւն չունին մեզ համար կամ կարող են շատերուն ամախորժ իսկ լինել. և կը յուսանք, թէ այս կերպով օգտակար ծառայութիւն մի մատուցած կը լինիք երկաքանչիւր կողմանց:

Մետասաներորդ դարուն երբ Հրեայք բազմութեամբ հիւրասէր Լեհաստանը գաղթել սկսան, նոյն ժամանակամիջոցին Տնիբերի վերայ գտնուած հիւրասէր երկիրը բացաւ նոյնպէս իր գիրկը արեւելէն եկող Հայոց, որոնք Հայաստանէն հաս հասան: Յետոյ երբ հասարակապետութիւնն իր սահմաններն ընդարձակեց, այս երկու ազգերս՝ որք աշխարհիս իրարու հակառակ կողմերէ հաս ընթացան, զանազան կողմեր բնակելով՝ Լեհաստանի միևնոյն իրաւանց և միութեան մէջ կ'ապրէին: Այլ միայն նոյնութիւն ժամանակին, յորում այս երկու ազգաց թագեցողութիւնն սկսաւ երկիւ, այլ նաև նոցա մասնաւոր յատկութիւնք մեզի առիթ կու տան լաւ ճանչնալու զանոնք: Հայք, ինչպէս նաև Հրեայք, Ասիոյ արեւելեան կողմի երկու իրարու դրացի երկիրներէն եկան, թէպէտ և երկուքն իսկ տարբեր ցեղերու կը վերաբերին. վասն զի Հայք կերպով մի Սլաւեան ցեղին ազգակից կրնան համարուիլ: Հայք և Հրեայք, Լեհաստանի մէջ ապրելով, գրեթէ մի և նոյն արհեստին նուիրեցին իրենց զիրենք. այսինքն է, վաճառականութիւնը ծաղկեցնելով՝ ապրուստին կը հարէին: Այս կրկին ազգերս բերին իրենց հետ մէկտեղ նաև Լեհաստանի երկրէն տարբեր լեզու մի, կրօնք, սովորութիւններ և բարք: Հաւասարապէս ամեն տեսակ ազատութիւն տրուելով նոցա, կը տեսնենք թէ այս երկու ազգերս, որքան իրարմէ տարբեր յառաջագիտութիւն ունեցան ապագային մէջ: Հայք, որոնք այնքան բազմաթիւ չէին, քիչ դարբեր վերջ սրտիւ միացան Լեհաց հետ: Արեւելեան այս գաղթականքս գտնելով իրենց երկրորդ հայրենիքն՝ ընդ հովանեալ օրինաց և բարուց Լեհաստան:

1. Adolf Pawinski. Warszawa 1876.

2. Հեղինակին առածմի՞ քան թէ ուսումնասիրած և հիմնաւոր կարծիք համարելի է: — Ծանօթ, թարգմ:

տանի, ձուլուեցան կերպով մի նոցա հետ՝ նկատմամբ իրենց բարուց, լեզուին և կրօնից, սակայն պահելով միշտ իրենց եկեղեցական արարողութիւնն և իրենց մինչև ցայսօր ժամանակի անշնչելի ցեղական տիպը: Վաճառականութեան մէջ գտնուող Հայք, յորում նիւթական շահ չունէին, նուիրեցին իրենք զիրենք քաղաքական գործոց, թողլով պատերազմական, ուսումնական և այլևայլ յիշատակարանաց մէջ իրենց անմոռանալի հետքը: Յիբաւի է, որ Հայք յաւերժ յիշատակի արժանի են:

Չանհոգացան լեհաստանի Հայք՝ այլևայլ ժամանակաց մէջ մշակել իրենց սեփական դիտութիւնն և պատմութիւնը: Կարծուածէն աւելի տեղեկութիւններ ունինք անոնց վրայ: Թողլով յիշատակել աստ զՏէր Յովսէփ Եպիփան Մի-նասովիչ, զՏէր Փրանկիակոս Չախարայասէփիչ¹, կը յիշեմ միայն նոր դարուս գրասէր և արդիւնաւոր հեղինակը, զՏէր Սաղովկ Պարոնչ, Դոմինիկեանց կարգէն, որ իւր զանազան գրուածոց մէջ՝ բոլորովին և քրտնալան կերպով ինքը զինքը նուիրեց լեհաստանի Հայոց պատմութիւնն՝ ի լոյս բնծայելու: Կենցաղ երեւելի Հայոց է՝ Լեհաստան² գրուածքին մէջ հաւաքեց և շարադրեց այբուբենի կարգաւ շատ տեղեկութիւններ և ծանօթութիւններ լեհաստանի Հայոց նըշնանաւոր և հոշակաւոր արանց վրայ: Իսկ ուրիշ երկասիրութեան մի մէջ՝ որ կը կոչուի՝ Եկաբֆէր Հայոց պատմութեան³, ներկայացուց հայ ազգին պատմութեան և կենցաղավարութեան, ինչպէս նաև եկեղեցական յարաբերութեանց կենդանի նկարագիրը և հայկական եկեղեցւոյ պատմութիւնն ի լեհաստան:

Աւելորդ կը համարինք աստ արդէն մեզի ծանօթ բաներու վրայ խօսիլ, վասն զի այս նիւթիս նկատմամբ՝ հետախոյզք կարող են աւելի մանրամասն և զանազան տեղեկութիւններ ստանալ ուրիշ ընդարձակ գրուածոց մէջ: Գոհ լինինք միայն յիշելու, Պարոնչի աղբերկ կոչուած գրութիւնը, զոր այս հատորիս մէջ կը հրատարակենք: Այս երկասիրութիւնս, իբրև յաւելուած մի է լեհաստանի Հայոց պատմութեան, և ըստ մեր կարծեաց, շատ հարկաւոր և օգտակար, և մանաւանդ որ բոլորովին նոր հրատարակութիւն մի է, և կը բովանդակէ մանրամասն նկարագրութիւն ամենայն դիպաց, որ մինչև ցայժմ եղածներէն աւելի փայլուն կ'երևին մեզ: Ուր կը պատմէ դարձեալ լեհաստանի Հայոց հռովմէական եկեղեցւոյ հետ միանալու միջոց հանդիպած զանազան խնդիրները: Քանի մի դար անցնելէն յետոյ ի կամէնից, իլովով, Եազովից, Սնիադին, Զամոսց, և ուրիշ քաղաքաց մէջ գտնուած գաղթական Հայք, ամենեւին չէին տարբերիլ այն տեղեցաց բնիկ ժողովուրդներէն, բայց միայն իրենց ազգային արարողութիւններով: Հայոց՝ կալ լաւ ևս ըսելով՝ Գրիգորեան եկեղեցին, (Ս. Լուսաւորչէն այսպէս կոչուած որ էր առաջին հայրապետ), կը տարբերի հռովմէական եկեղեցիէն հաւատոյ ինչ ինչ խնդրոց մէջ: Եկեղեցական լեզուն չէր խոսիլ իւր. եկեղեցական գերագոյն իշխանութիւնը կը վարէին Ելմիածնի կաթողիկոսը, որոցմէ կախումն ունէին նաև լեհաստանի Հայք:

Շատ անգամ առաքելական աթոռոյն ջանքերն, միացնելու զՀայս ընդ հռովմէական եկեղեցւոյն՝ արդիւնք մի չունեցան: Եւ դարուն երկրորդ կիսէն վերջը, հազիւ ուրեմն միացան լեհաստանի Հայք ընդ Հռովմայ, և այս բանն կատարուեցաւ հռովմէական աթոռոյն ջանիւք, որ յամիւս 1866 զրկեց նուիրակներ յիլովով, կոչելով յառաջնորդութիւն այս առաքելական խնդրոյս՝ զԹէաթի-նեան կրօնաւորս, և մասնաւորապէս զՏէր Կղեմէս Կալանոս և զՏէր Ալոգիոս

1. Wiadomosc o Ormianach. w Polsce. Bibl. Im. Ossol. Lwow 1842. T. I. 64—93. T. II. 59—113.

2. Իլովով. 1866.

3. Տարմոսպոլ. 1869.

Մ. Պիդու, ինչպէս նաև ուրիշ երևելի և արդիւնաւոր անձինք: Տէր Կղեմէս Կալանտոս իւր ժամանակի շատ գիտուն և ուսումնական անձինքներէ մին էր. կը խօսէր զբրթէ բոլոր աւստկան լեզուներն, որոց մէջ նաև հայերէնը, ընդ արձակ գրուածք մի երկասիրեց, որ կը բովանդակէր ընդհանուր Հայոց եկեղեցական և աշխարհական պատմութիւնն¹, որ նոյն իսկ այս ժամանակներս մեծապէս յարգի է: Երկու տարի գործունեայ առաքելութիւն կատարելով, յիշով վախճանեցաւ յամին 1606, չկարենալով տեսնել Հայոց միութիւնը ընդ հռովմէական եկեղեցւոյն, որ անմիջապէս իր մահուընէ քանի մի ամիս վերջը կատարեցաւ: Երբ մնացեալ առաքելութեան, ինչպէս նաև Թէաթինեանց ձեռքով Հայոց համար հաստատուած դպրոցին կառավարութիւնը յանձն առաւ Տէր Ալուզիոս Պիդու, Տէր Կալանտոսի մտերիմ բարեկամը, որ ազգաւ դաղդիացի էր, շատ հմուտ և տեղեակ հայերէն գրաբար և աշխարհաբար լեզուին, և մին 'ի գլխաւոր արդիւնաւոր անձանց միաբանութեան:

Վերայիեալ Տէր Պիդու, հեղինակ է իտալերէն ձեռագրի մի, որ Թարգմանած 'ի լեհացի բարբառ կը հրատարակենք: Մերձաւորապէս իր վրայ ծանօթութիւն չունիք, նա ինքն կը յիշէ, թէ դեռ անփորձ պատանի էր երբ առաքելութեան զրկուեցաւ յիշով: Երկայն տարիներ հօս կեցաւ հայ ազգին վրայ աշխատելով: Յամին 1667 առ Մարտիլի նուիրակն ուղղեալ նամակը կարդալ ցիւնք, որ դպրոցի կառավարութեան և իւր առաքելութեան նկատմամբ գրուած էր, ուր մասնաւորապէս Մարիամ Լուզովիկեայ թագուհւոյն առ ինքն ցուցած խնամոց վրայ կը պարծէր, և զթագուհին կ'անուանէ իբրև հզօր միջնորդ միութեան Հայոց: Բայց թէ ինչ կիճակ ունեցաւ արդեօք ասպազային մէջ, չկարաջինք զիտնալ²:

Ձեռագիրն՝ որ Թերթի ձեռով և 100 էջերէ բաղկացեալ և կազմուած է, բուն նորա ձեռքով գրուած է, ինչպէս Տէր Պիդուի միւս գրուածներս կ'ապացուցանեն. հետեւեալ վերագրովք. Breve relatione dello stato, principii e progressi della missione apostolica agli Armeni di Polonia e Valacnia e provincie circonvicine e dell' erectione e fondatione del collegio pontificio di Leopoli, per la medesima nazione Armena sotto la cura di pp. chierici regolari detti volgarmente Teatini, sin al 1° Aprile 1669, per il padre d. Luigi Maria Pidou C. R. Superiore della detta missione e collegio. Ձեռագիրն իմաստը, զոր 3 էջի մէջ տեղաւորեցինք, կը ներկայացընէ ընթերցողաց երկասիրութեան հոգին և նպատակը. և ինչպէս ըսինք 'ի վեր անդր, կը բովանդակէ եկեղեցական պատմութեան մէջ մինչև ցայժմ մեզի անծանօթ մնացած և այն անձի ձեռքով ընծայած կարեւոր դէպքեր, որոց մէջ զըլխաւոր շարժիչներէն մին եղաւ նա:

Երկրորդ ձեռագիրն, որ լատիներէն գրուած է և եօթն քառածալ թղթեայ պրակներէ և 120 էջերէ բաղկացած է հետեւեալ վերնագրով. Compendiosa relatio unionis nationis Armeno-Poloniae cum S. Ecclesia ad annum Christi 1676, անծանօթ հեղինակի մի կը պատկանի: Հեղինակը շատ օգուտ քաղեր է վերայիեալ իտալերէն նախկին ձեռագրէն, բայց սկսելով յամէն 1669, յորում պատմութիւնը կը դադրի, ինքը առաջ կը տանի մինչև ցամա 1666: Կ'երևի թէ հեղինակն առաքելութեան անձինքներէ մին էր, վասն զի ամէն տեղ կը տեսնուի իր հմտալից գիտութիւնը:

Ուրիշ երկու իտալերէն ձեռագիրք ևս, ինչպէս նիւթը կը ցուցնէ, տպագրուելու որոշեալ էին: Սրբա այժմ իրենց առաջին կերպով չեն ներկայանար,

1. Clementis Galani etc. Historia Armena ecclesiastica et politica. Coloniae 1686.

2. Տէր Պիդու եպիսկոպոսական զանուկ վրայ ևս բարձրացած է: — Ծանօթ թարգմ:

այլ թարգմանեալ 'ի լեհերէն բարբառ, զոր մասնաւոր դիտմամբ հրատարակեցինք, համարելով որ այս կերպով թէ՛ ուսման և թէ՛ մեծագոյն օգտի համար պիտի ընթեռնուին անոնք, որ առանց ուզելու պարապիլ պատմական քննութեամբ, ուղարուծիւննին աւելի ազգային խնդրոց վրայ կը դարձնեն: Կրկու հեղինակացս բացատրելու կերպը մեզի այնքան գիրաւատելի և հասկանալի երևեցաւ, որ իբրիս առձեռն պատրաստ խնդիր, քան թէ պատմական նիւթ համարելի է: Ուստի կարծենք, որ ընթերցողն առանց իսկ երկայն յառաջաբանութեան in medias res կարէ այս երկասիրութեան խորը թափանցել:—

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Հայոց ազգը՝ շատ կէտերու մէջ, բայց 'ի մասնաւորի իւր նախնի հնութեան համար յիշատակութեան արժանի է. վասն զի իւր անունն և սկզբնաւորութիւնը ժառանգած է նոյաժին Սեմոյ որդւոյն յԱրամէն¹, ընծայելով մեզի անթիւ մարտիրոսներ, կուսաններ, վարդապետներ, առաջնորդներ, թագաւորներ, և իշխաններ, որոնք իրեն Փառք ու պարծանք եղան: Նոյն իսկ բազմութեամբ զբաղանցեց ծան զայլ ազինս. վասն զի յառականացաւ բնակիլ միայն մեծ Հայաստանի մէջ, այլ մեծաւ մասամբ զաղթեցաւ նաև 'ի Պարսկաստան, 'ի Մարս, 'ի Միջագետս, յԱտրեստան, 'ի Փորր Ոսիա, 'ի Պոնտոս, 'ի Վրաստան, 'ի Մընկերիայ, յԱղուանս, 'ի Թրակիա, 'ի Միսիա, 'ի Թաթարաստան, 'ի Պուղտան, 'ի Մոլտաիա, 'ի Էհաստան, Իտալիոյ շատ քաղաքներու մէջ, 'ի Գաղղիա, 'ի Սպանիա, 'ի Գերմանիա, 'ի Լոսիտանիա, 'ի Հոլանտա, և յԱնգղիա, և մանաւանդ արևելեան և արևմտեան Հնդկաստանի մէջ:— այս ազգը կ'ըսեմ— յամի Տեառն 262 II. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով ընդունեցաւ քրիստոնէական հաւատքը, թէպէտ և Ս. առաքեալն թաղէտս և Բարդուղիմէոս, յամի Տեառն 44 տարածած էին նոր հաւատոյ լոյսը, բայց քիչ ժամանակ վերջը, Ժողովուրդը վերստին 'ի կապալատութիւն անկեալ էր. Հայոց ազգը մնաց հաստատուն ուղղափառ հաւատոյ մէջ մինչև ցամն Տեառն 800:

Իբր Ս. Գրիգոր Լուսաւորչի Տրդատայ հետ՝ որ Որգարէն վերջը իբրեւ առաջին քրիստոնեայ թագաւորն եղաւ՝ գնաց 'ի Հռովմ, իւր ձեռքով ամբողջ ազգը միտնելով՝ ընդունեցաւ Սեղբնատրոս քահանայապետէն զանազան արտօնութիւններ, և անուանեցաւ ընդհանուր Պատրիարք՝ և ընդհանրական փոխանորդ Փոքր Ասիոյ, (ըստ վկայութեան պատմագրաց Հայոց): II. Գրիգոր Լուսաւորչի և իւր յաջորդներն շատ տարիներ կառավարեցին Հայոց եկեղեցին, ունելով իրենց աթոռը, թողաւորանիստ քաղաքի մէջ 'ի Վաղարշապատ (որ այժմ աւերակներու տակ ծածկուած է, և միայն այս երեք փառաւոր եկեղեցիքը մնացել են, այսինքն է, II. Հռիփսիմեայ, II. Գայիանեայ և Լլմիածնի): Իւրաց վերջը պատերազմներու և զանազան դժբաղդութեանց պատճառաւ, բաժնուեցաւ ազգը չորս կաթողիկոսութեանց. այսինքն է, Էջմիածնի կաթողիկոսն որ ընդ իշխանութեամբ Պարսից էր, Աղուանից կաթողիկոսը փոքրագոյն իշխանութեամբ նոյնպէս Պարսից տէրութեան ներքև, Աղթամարոյ կաթողիկոսը Վանայ ծովուն մէջ Օսմանեան վարչութեան ներքև, և հուսկ ուրեմն բուն II. Գրիգորի յաջորդ Կիլիկիոյ կաթողիկոսն, որ իւր աթոռն հօս փոխադրեց,

1 Հեղինակը սխալմամբ զԱրամ Սեմայ որդիմ շփոթէ բմդ յաքեթեանմ Արմեմակայ և Արամայ: — Կամօթ. Թարգմ:

2. Հեղինակիմ աստ տուած տեղեկութիւններմ, Գաշանց ամհարազատ թղթիմ Գալմմայտ եղած են, որով և երկարակամ: — Կամօթ. Թարգմ:

ունելով իւր վարչութեան ներքեւ գեղեցիկ քաղաքներ և թեմեր, ինչպէս եւ
Երուսաղէմայն, Հայէպի, և ուրիշ ծովահայեաց քաղաքներ, որք նոյնպէս
Տաճկի իշխանութեան ներքեւ կը գտնուին: Գերագոյն իշխանութիւն վարողն,
որ և բոլոր Հայոց ազգէն իբրև ընդհանրական կաթողիկոս ճանչուած, թէ՛ յա-
րևելս և թէ՛ մասամբ յարևմուտս՝ է Ելմիածինն: Բարոյապէս կ'ապրի նա ան-
շուք կերպով և ներքին ճգնութիւններով, կը բնակի յԵլմիածին, որ այժմ
վանատան ձեռով շինուած է, և սև վանական կապայ հագած է, որ մեծ սրածայր
վեղարով մի կը վերջնայ, և շուրջ պատեալ 'ի բազմութենէ վարդապետաց
(վարդապետութեան աստիճանն Հայոց մէջ աւելի մեծ համարուած է քան
թէ եպիսկոպոսականը): Առաքելական աթոռոյն մեծ սէր և յարգութիւն կը
ցուցնէ, և մեծ պատուով կ'ընդունի քարոզիչները. և ծածուկ կերպով հրութիւն
իսկ կը ցուցնէ առ առաքելական աթոռն, ինչպէս ըրին, Յակոբ կաթողիկոսն
և իր նախորդքը, մասնաւորապէս Մելքիսեդեկ, Մովսէս, և Փիլիպպոս:
Հօս յիշուած չորս կաթողիկոսաց հպատակները կը հնազանդին նոցա իբրև
Հռովմայ քահանայապետներու: Կաթողիկոսները նուիրակներ կը զրկեն ժո-
ղովրդեան մէջ, ողորմութիւն ժողովելու նպատակաւ, որով կ'ապրին նոքա
և որոն համար ծանր հարկ կը վճարեն Պարսից Դահին և Տաճկաց Սուլ-
թանին, թէպէտ և առաջնոյն իշխանութեան ներքեւ գտնուող Հալէ, մեծ
ազատութիւն կը վայելեն և ամենայն ազատութեամբ կը կատարեն եկեղե-
ցական պաշտամունքն, իբրև թէ ընդ իշխանութեամբ քրիստոնէական տէ-
րութեան մի լինէին:

Թարգմ. Հ. Մ. Մ.

Շարունակելի

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄՈՂԱՍԷՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱՐԱՐ ԹԱՐԳՄԱՆԵՑ ԵՒ ԼՈՒՍԱՐԱՆԵՑ

ԽՈՐԷՆ ԾԱՅՐԱԿՈՅՆ Վ. ՍՏԵՓԱՆԷ

(16⁰, Առաջարան էջ ԶԲԺ. Երես 301. Երևան. և Յաւել. էջ 328)

ԳԻՆՆ Է ՐԲ. 1: 50

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ 1889

Ի. ՍԿՕՐՕԹՕԴՕՎԻ ՏՊԱՐԱՆ